

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»**

**Մեծ ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի հրաշալի Հարության, մեր սրտերը վերստին կլեցնե լույս զգացումներով և սուրբ սպասումներով:**

**Փրկչի Իջման նվիրական Սեղանի առաջ աղոթող ենք որ փրկարար այս ավետիսի շնորհները առատապես բաշխվին մեր ժողովուրդի բոլոր զավակներուն, որպեսզի անոնք կարող ու արժանի դառնան «որդիք լուսոյ» կոչվելու, միշտ աներեր մեր նախնյաց հավատքի վեմին վրա, միշտ հավատարիմ Հայաստանյայց մեր Մայր եկեղեցվույն, միշտ պատրաստ՝ բարին գործելու իրենց կյանքի ճանապարհին:**

**Մեր մշտանորոգ մաղթանքն է նաև որ հարուցյալ Փրկչի՝ աշխարհին թողած խաղաղության ոգին, ավելի ու ավելի ճառագայթե մարդոց ու ազգություններու հոգիներեն ներս, առաջնորդելու համար զանոնք դեպի նավահանգիստը արդար ու համերաշխ գոյակցության, հերջանկություն բոլորին անխտիր:**

**Սուրբ Հարության ուրախությամբ, եղբայրական սիրով կողջունենք Ձեզի և Մեր ամենաբարի մաղթանքներն ու օրհնությունը կբերենք սուրբ**

Աթոռիդ զինվորյալ միաբանության և համայն մեր հավատացյալ ժողովուրդին:

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի և մահ նմա ոչ ևս տիրէ: Զի ոչ մեռաւն՝ մեղացն մեռաւ մի անգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ: Նոյնպէս և դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ 9—11):

Օրհնյալ է լույս Հարությունն Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:

## ՎԱԶԳԵՆ Ա
## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*

* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: